Վեշտասան տնով յաւարտ ունի,
Հրամանաւ Լովցոց դատաւորի.
Վասն ամբաստեան դատաստանի.
Ամէն, ամէն եւ եղիցի:

Հայերի բացարձակ ինքնավարութիւնը բնաւ հաճելի չէր Լվովի քաղաքային ինքնավարութեան, որը անհաշիւ դատեր ունէր նրանց դէմ եւ յամառօրէն պահանջում էր, որ հայերն էլ ենթարկուին համաքաղաքային վարչութեան եւ ընդհանուր քաղաքային դատարանին:

Հետզհետէ արքայական հրամանագրերը սահմանափակում են հայոց դատարանի իրաւասութիւնները, ԺԵ դարի վերջերին, առնելով նրանց ձեռքից բոլոր քրէական գործերը, իսկ 1510 թուին՝ նաեւ անչարժ գոյքերին վերաբերուող բոլոր գործերը: Հայկական դատարանները պահեցին իրենց գոյութիւնը, բայց նրանց նախագահը այլեւս ոչ թէ հայերից ընտրուած վոյթն էր, այլ քաղաքի ընդհանուր վոյթը, որը նախագահում էր հայ աւագներից բաղկացած հայկական դատարանում:

Մօտաւորապէս նոյն ժամանակները, 1519 թ., Սիգիզմունդ Ա. թագաւորը հաստատեց «Հայկական օրինագիրքը», հայկական օրէնքների մի ժողովածու, որով պէտք է ղեկավարուէին հայկական դատարանները: Այս օրինագիրքը պարունակում է Մխիթար Գոշի «Դատաստանագրքից» առնուած մի շարք զուտ հայկական օրէնքներ՝ լրացուած Գալիցիայի կեանքում կիրառուող մագդեբուրգեան իրաւունքի մասերով:

Խաղաղ ժամանակ Լեհաստանի քաղաքային կեանքը կարգաւորող վերոյիշեալ հիմնարկութիւններից զատ արտակարգ պարագաներում, երբ ամբողջ քաղաքի շահերը շօշափող խնդիրներ էին առաջ գալիս, Լվովի քաղաքում գումարւում էր, այսպէս կոչուած, ընդհանուր նստաշրջանը, որ բաղկացած էր բոլոր դասերի ներկայացուցիչներից: 1622 թ., երբ մշակւում էին նման նստաշրջանի համար տալիք հրահանգները, որոշուեց եւ քուէարկութեան կարգը. առաջինը իրենց քուէն տալիս էին քաղաքային դատարանի անդամները, երկրորդ՝ հայ աւագները: Հայերից յետոյ երկու քուէ էր տալիս քառասուն այրերի կոլլեգիան (մէկ քուէ վաճառականներից, մէկ՝ արհեստաւորներից) եւ, վերջապէս, ռուսինները:

Եան Սոբեսկի թագաւորի օրով, երբ թիւրքերը արշաւում էին Լեհաստանի վրայ՝ սպառնալով վերջինիս գոյութեան, երբ պատերազմական ծախսերը ծայր աստիճանի մեծացան եւ 1689 թ. կազմուեց յատուկ մի յանձնաժողով Լվովի բնակչութեան վրայ դրուելիք տուրքը բաշխելու համար, 12 հոգինոց այդ յանձնաժողովի մէջ քաղաքային վարչութիւնից մտան 2 ներկայացուցիչ, քաղաքային դատարանից՝ 1, քառասուն այրերի կոլլեգիայից՝ 4, հայերից՝ 3 եւ ռուսիններից՝ 2:

Այս թուերն ինքնին բաւական են տեսնելու համար, թէ հայերը ի՞նչ կարեւոր տեղ էին գրաւում Լվով քաղաքի կեանքում:

(Շարունակելի)